

Խաչատուր Աբովյան

Պարապ վախտի խաղալիք

Զղարի շունը ու ֆիլը

Քուչեքանցովն մեկ ֆիլ էին տանում,
Որ ցույց տան՝ էնպես էր բանն երևում:
Ո՞վ չի գիտի ֆիլն հրաշք է մեր կողմերն:
Էսպես եղևիցն հազարն ընկել էր,
Ով բանից փախած՝ հայվարա մարդ էր,
Որդիանց որտեղ մեկ պստիկ շուն էլ
Ռաստ էկավ թե չէ՝ սկսեց հաչել,
Վրա թռչիլ, կոնձալ, բողազը ճոթռել:
Էսպես կռվելով՝ հետը քաշ ընկնիլ:
«Ա՛չքի լիս՝ կտրի՛ ձենդ ու անսաս կա՛ց:
Չե՞ս ամաչում՝ որ երեսդ պատռած,
Քաշ ես ընկել դու, քեզ ու քեզ սպանում:
Ախր ի՞նչ քո բանն ա՝ տո ջանմ, գյոզմ:
Չափդ ճանաչես, քո գլուխդ լաս:
Լեղիդ հո պատռեց, հերի՞ք չի գոռաս:
Չե՞ս տեսնում, որ դու խռռում ես, ճաքում,
Ֆիլն իրան համար՝ իր ճամփեն գնում:
Քո հաչալը նա բանի տեղ չքցում»:—
Նրան մեկ ուրիշ շուն խրատ տվեց:—
Հա՛ֆ, հա՛ֆ, հա՛ֆ՝ նրան պատասխան տվեց
Մեր պստիկ շունն, ու էլ սազն սկսեց:

«Հենց է՛դ ա սրտիս շատ դվաթ տալիս.
Որ առանց կռվի՝ անունս լսելիս՝
Մեր հարևանի շները կասեն:
Տե՛ս՝ Զղարի շունն ի՞նչ ղոչաղ շուն ա,
Որ ֆլի վրա էլ հաչիլ կարում ա»:
Բազի քնձոտ մարդ էլ էս ա ասում,
Երբ մեծ մարդի վրա նա իր ձին քշում:—